Հավելված N 2
2025 թվականի հունվարի հունվարի «15»-կնքված
«1032-11002/2025-ԾԿ» պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» (Գյումրի 1) |
| Դրամաշնորհի N | «1032-11002/2025-ԾԿ» |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 03.01.2025 - 31.12.2025 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025 - 30.12.2025 |
| Ներկայացման օր | 22.12.2025 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգար Կարապետյան, ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար պլանավորված գործողություններն են.
1) կենցաղային սպասարկում
2) բժշկական օգնություն և սպասարկում
3) սոցիալ-հոգեբանական օգնություն
4) խորհրդատվության օգնություն
5) Լվացքատան ծառայություն
6) սննդի, հիգիենիկ պարագաների և առաջին օգնության դեղորայքի տրամադրում
7) Շահառուների կոմունալ վարձավճարների փոխհատուցում ձմռան ամիսներին՝ ապահովելով տաք ձմեռ նրանց համար:

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

**<u>Սոցիալ-հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն</u>**

Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է ծրագրում ներգրավված 100 շահառուների կարիքի գնահատում՝ կիրառելով կազմակերպության կողմից մշակված կարիքի գնահատման ձևաթուղթը: Գնահատված կարիքներին համարժեք յուրաքանչյուր շահառուի հետ կնքվել է սոցիալական ծառայությունների մատուցման պայմանագիր: Կարիքի գնահատումից հետո բազմամասնագիտական թիմի կողմից յուրաքանչյուր շահառուի համար մշակվել է Անհատական սոցիալական ծրագիր, որի հիման վրա իրականացվում է շահառուի խնամքը:

Սոցիալական աշխատողը մշտապես շահառուների կողքին է, ցանկացած թղթաբանության կազմակերպելու կամ սոցիալական ոլորտին առնչվող խորհրդատվություն ստանալու կարիքի դեպքում: Դեղորայքի ստացման համար սոցիալական աշխատողի կողմից կատարվել է շահառուների անապահովության միավորի տեղեկանքի ստացում, որով բուժքույրերը դեղատներից ստացել են պետության կողմից հատկացվող անվճար դեղորայքը՝ ըստ դեղատոմսերի: Հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողի կողմից կատարվել է շուրջ 23 շահառուի ուղեկցում ՄՍԾ, փաստագրում անապահովության գնահատման համակարգում: Կատարվել է նաև շահառուների ուղղորդում կամ ուղեկցում համայնքապետարան, մարզպետարան կամ այլ պետական կառույցներ, օժանդակություն աջակցության դիմումների լրացման գործում:

*Շահառուների սոցիալական խնդիրները լուծումներ են ստանում համապատասխան ծառայությունների տրամադրման, խորհրդատվությունների, միջնորդական ծառայությունների կամ անմիջական օգնության միջոցով:*

Շահառուի հետ կնքված պայմանագրին, ծառայությունների մատուցման ժամանակացույցին և անհատական սոցիալական ծրագրին համապատասխան իրականացվել են խնամքի ծառայությունների տրամադրում նաև, մասնավորապես՝

**<u>Կենցաղային սպասարկում</u>**

Շահառուներին տրամադրվել է սոցիալական խնամողի ծառայություններ, ով տնայցերի ընթացքում իրականացրել է շահառուի խնամք, տան մաքրում, շահառուի լողացում, մազերի և եղունգների հարդարում, անկողնային պարագաների փոխում, հագուստի փոխում, գնումներ, կոմունալ վճարումներ: Սոցիալական խնամողի կողմից հիմնականում տնայցեր են կատարվել Ա խմբի շահառուներին օրական 1 անգամ՝ 1-ական ժամով և Բ խմբի շահառուներին՝ շաբաթական 2 անգամ՝ 1-ական ժամով: Ըստ շահառուի կարիքի և տարբեր իրավիճակների՝ իրականացվել են նաև հավելյալ այցեր:

Հաշվետու ժամանակահատվածում գործել է նաև **լվացքատունը**, որտեղ լվացվել, արդուկվել են շահառուների հագուստները և հատկացվել վերջիններիս: Այն շահառուները, ովքեր իրենց բնակարաններում ունեն լվացքի մեքենաներ, սոցիալական խնամողները լվացքը հագուստները լվացել են շահառուի բնակարանում

*100 շահառուներն ապահովված են կենցաղային սպասարկման, հիգիենայի պահպանման ծառայություններով՝ ըստ անհրաժեշտության: Լվացքի, լոգանքի, տան մաքրության ծառայությունների շնորհիվ բարելավված է շահառուների հիգիենիկ վիճակը: Գնումների և կոմունալ վճարների շնորհիվ շահառուն ապահովված է իրեն անհրաժեշտ ապրանքներով և կոմունալ ծառայություններով, որի իրականացման կարգավորումը ամրագրվում է ծառայությունների մատուցման պայմանագրում և շահառուի ստորագրությամբ՝ շահառուի մոտ գտնվող ծառայությունների տնային թերթիկում:*

**<u>Բժշկական օգնություն և սպասարկում</u>**

Բուժքույրն իրականացրել է տնայցեր շահառուներին, որի ընթացքում ստուգվել է առողջական վիճակը, իրականացվել է արյան ճնշման, արյան մեջ շաքարի մակարդակի չափում, ըստ անհրաժեշտության կատարվել են ներարկումներ, անհրաժեշտության դեպքում վերքերի և վնասված հատվածների մշակում և վիրակապում, տրամադրվել է բուժում, ինչպես նաև դեղերի օգտագործման վերաբերյալ խորհրդատվություն՝ ընտանեկան բժշկի հետ համագործակցությամբ: Կատարվել է ուղղորդում դեպի պոլիկլինիկաներ առավել բարդ հետազոտությունների կատարման

համար: Բուժքույրը խորհրդատվություն է տրամադրել նաև շահառուներին և նրանց օգնող անձանց՝ առողջապահական թեմաների շուրջ: Բուժքույրերը մշտական կապի մեջ են եղել շահառուների թաղամասային բժիշկների հետ, ստացել են պետության կողմից հատկացվող դեղորայքը:
Բուժքրոջ կողմից իրականացվել են այցելություններ Ա խմբի շահառուներին շաբաթական առնվազն 2 անգամ և Բ խմբի շահառուներին՝ շաբաթական առնվազն 1 անգամ: Ըստ շահառուի կարիքի և տարբերի իրավիճակների՝ իրականացվել են նաև հավելյալ այցեր:
Այցերի և մատուցված ծառայությունների վերաբերյալ կատարվել են նշումներ ծառայությունների մատուցման ստուգաթերթում, ինչպես նաև շահառուի բնակարանում գտնվող ծառայությունների մատուցման տնային թերթիկում: *Տրամադրված կանոնավոր բժշկական օգնության, առողջապահական ծառայությունների, դեղամիջոցների տրամադրման և բուժքույրերի հետևողականության շնորհիվ պահպանված և բարելավված է շահառուների կայուն առողջական վիճակը:*

<u>Մշակութային միջոցառման կազմակերպում</u>
Տարիքն իմ ուժն է, ոչ թե սահմանը
01.10.2025թ. Գյումրու «Բարեկամության» այգում տոնական մթնոլորտ էր: Մեծ շուքով նշվեց Տարեցների միջազգային օրը՝ կազմակերպված «Հայկական Կարիտաս» և «Առաքելություն Հայաստան» բարեգործական կազմակերպությունների ու Գյումրու քաղաքապետարանի համագործակցությամբ: Միջոցառմանը ներկա էին Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանը, կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև բազմաթիվ հյուրեր Երևանից, Վանաձորից ու Գյումրիից: Տոնական օրը ուղեկցվեց կենդանի երաժշտությամբ, նարդու մրցաշարով, ձեռքի աշխատանքների ցուցահանդեսով և, ամենակարևորը՝ սրտանց շնորհավորանքներով: Տարեցներին շնորհավորեցին մարզպետը, ինչպես նաև «Հայկական Կարիտաս» և «Առաքելություն Հայաստան» կազմակերպությունների ներկայացուցիչները՝ ընդգծելով ավագ սերնդի դերը մեր երկրի զարգացման գործում:

*Մշակութային միջոցառումները նպաստում են, որ շահառուները դուրս գան մեկուսացումից և իրենց հասարակության լիարժեք անդամ զգան:*

<u>Սննդի, հիգիենիկ պարագաների և դեղորայքի հատկացում, կոմունալ ծախսերի փոխհատուցում</u>

Շահառուներին հատկացվել են բժշկի կողմից նշանակված դեղորայքը, որը չի տրամադրվում անվճար:

Ամսական 2 անգամ կազմակերպվել են աշխատանքային հանդիպում-քննարկումներ, որոնց ժամանակ ամփոփվել են կատարված աշխատանքները, առաջացած հրատապ խնդիրները և պլանավորվել հաջորդ շաբաթվա անելիքները:

*Ծրագրային թիմի կողմից շահառուների համար արժանապատիվ խնամք և սպասարկում կազմակերպելու արդյունքում նրանց կյանքի որակը բարելավված է: Շահառուները հիմնականում ունեն կայուն առողջական վիճակ, բժշկական ծառայությունների հասանելիություն, անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական խորհրդատվության, անհրաժեշտ դեղորայքի, սննդի և հիգիենիկ պարագաների հասանելիություն:*

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Տնային խնամք ծրագրի միջոցառում նախատեսված տարեցների միջազգային օրվա

կապակցությամբ
https://www.facebook.com/media/set/?vanity=ArmenianCaritas&set=a.1729736416357299

Բոլոր այցերի, միջոցառումների, իրականացված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ թղթաբանությունը և նկարները հավաքվում և պահպանվում են:
Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք հաջողության պատմություն:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Ծրագիրը ավարտվում է դեկտեմբերի 31-ին

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

1. Հոկտեմբերի 20-ին Գյումրու և Վանաձորի «Տնային խնամք» ծրագրի համակարգողները և սոցիալական աշխատողները մասնակցեցին դասընթացի: Հասարակայնության հետ կապերի պատասխանատուն ներկայացրեց, թե ինչպես է անհրաժեշտ ճիշտ և գրագետ շարադրել հաջողված պատմությունները, ինչ բովանդակություն պետք է դրանք ունենան, ինչպես ապահովել որակյալ լուսանկարներ, ինչպես նաև՝ ինչպես խուսափել այնպիսի սխալներից, որոնք կարող են խնդիրներ առաջացնել նյութերի և լուսանկարների հրապարակման ընթացքում:

2. Հոկտեմբերի 28-ին «Տնային խնամք» ծրագրի աշխատակիցները մասնակցեցին էթիկայի և վարվեցողության կանոնները թեմաներով վերապատրաստման դասընթացին: Դասընթացի նպատակն էր ներկայացնել Հայկական Կարիտասի էթիկայի կանոնները՝ ընդգծելով այն արժեքներն ու սկզբունքները, որոնք պետք է լինեն աշխատակիցների և շահառուների փոխհարաբերությունների հիմքում:

3. Հոկտեմբերի 29-ին Ծրագրի ղեկավարը մասնակցեց ՄԱԿ-ի Կանանց հարցերով կազմակերպության Հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված «Գենդերային հավասարության խթանում և ներդրումներ խնամքի ոլորտում» թեմայով հանրային քննարկմանը, որի ընթացքում անդրադարձավ իրեն ուղղված հետևյալ հարցերին՝ ինչ քայլեր են անհրաժեշտ, որպեսզի խնամքի համայնքահեն մոդելները ստանան պետական ճանաչում և ինտեգրվեն խնամքի համակարգում՝ որպես կայուն ու ներառական լուծումներ: Ինչպե՞ս կարող է Հայկական Կարիտասը խթանել խնամքի ոլորտում աշխատող կանանց աշխատանքային պաշտպանությունն ու մասնագիտական զարգացումը: Ինչ քայլեր պետք է ձեռնարկեն պետությունն ու քաղաքացիական հասարակությունը՝ խնամքի աշխատանքը որակյալ ու արժևորված մասնագիտություն դարձնելու համար

4. Նոյեմբերի 06-ին «Տնային խնամք» ծրագրի 2 բուժքույրեր մասնակցեցին «Կառուցենք կամուրջներ. Հայաստանում փախստականների և տեղական համայնքների սոցիալ-տնտեսական ինտեգրում և դիմակայունության բարձրացում» ծրագրի աղետների ռիսկերի

կառավարման (ԱՌԿ) բաղադրիչի շրջանակում կազմակերպված «Առաջին օգնության հիմունքներ» թեմայով դասընթացին: Դասընթացի հիմնական նպատակն էր մասնակիցներին ներկայացնել առաջին օգնության սկզբունքներն ու գործողությունների ճիշտ հաջորդականությունը՝ ներառյալ անգիտակից տուժածի վարումը, արյունահոսության, այրվածքների և վնասվածքների առաջնային խնամքը, շնչուղիների խցանման և բժշկական հանկարծահաս վիճակների ճանաչումն ու արձագանքը, ինչպես նաև սիրտ-թոքային վերակենդանացման (CPR) տեխնիկան: Դասընթացը ներառում էր թե՛ տեսական, թե՛ գործնական մասեր՝ ապահովելով մասնակիցների հմտությունների զարգացումը իրական իրավիճակներում արդյունավետ արձագանքման համար:

5. Նոյեմբերի 14-ին Ծրագրի ղեկավարը մասնակցեց Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված հանդիպմանը, որի ընթացքում նախարար Արսեն Թորոսյանը ներկայացրեց երեխաներին և տարեցներին վերաբերող ընթացիկ ծրագրերը, ինչպես նաև առաջիկայում նախատեսվող նախաձեռնությունները:

6. Նոյեմբերի 20-ին ծրագրի 2 սոց. աշխատողներ մասնակցեցին «Կառուցենք կամուրջներ. Հայաստանում փախստականների և տեղական համայնքների սոցիալ-տնտեսական ինտեգրում և դիմակայունության բարձրացում» ծրագրի աղետների ռիսկերի կառավարման (ԱՌԿ) բաղադրիչի շրջանակում կազմակերպված «Արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոններ» թեմայով դասընթացին: Դասընթացի նպատակն էր բարձրացնել մասնակիցների իրազեկվածությունն ու պատրաստվածությունը արտակարգ իրավիճակների դեպքում՝ ներկայացնելով արտակարգ իրավիճակների տեսակներն ու դրանց առաջացրած վտանգները, ՀՀ-ին սպառնացող հիմնական ռիսկերի առանձնահատկությունները, ինչպես նաև աղետների ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքներն ու մեխանիզմները: Դասընթացը միաժամանակ ապահովեց տեսական գիտելիքների յուրացում և գործնական հմտությունների զարգացում խմբային խաղարկումների, քննարկումների և հարցուպատասխանի միջոցով՝ նպաստելով մասնակիցների կարողությունների ամրապնդմանը իրական

7. Նոյեմբերի 26-ից - 28-ը անցկացվեց 3-օրյա դասընթաց Գյումրու, բուժքույրերի համար՝ նպատակ ունենալով զարգացնել դասավանդման հմտությունները, ինչպես նաև խորացնել գիտելիքները խնամքի ժամանակակից և նորարարական մեթոդների վերաբերյալ: Դասընթացները վարեցին Կարիտաս Վրաստանի Տնային խնամք ծրագրի բուժքույր-դասավանդողներ Նելլի Կարդանովը և Նունա Ուգրեխելիձեն: Առաջին օրը մասնակիցները սովորեցին դասավանդման հիմնական սկզբունքները և տեսական ու գործնական մեթոդները՝ սեմինարներ և խմբային քննարկումներ, գործնական առաջադրանքներ, դեպքերի վերլուծություն (case-study), դերային խաղեր, սիմուլյացիոն վարժություններ: Երկրորդ օրվա ընթացքում, իրականացվեց կինեսթեթիկայի գործնական բլոկ: Մասնակից բուժքույրերը կատարեցին շարժողական վարժություններ՝ սովորելով մարմնի ճիշտ կեցվածքի, շարժումների, ինչպես նաև հիվանդի անվտանգ բարձրացման ու տեղափոխման հիմնական սկզբունքները: Սա նպատակ ուներ նվազեցնել բուժքույրերի ֆիզիկական ծանրաբեռնվածությունը ապահովել անվտանգ աշխատանքային տեխնիկա և կանխարգելել մկանային-կմախքային վնասվածքները: Օրվա երկրորդ կեսին ներկայացվեցին խնամքի և վերքերի կառավարման նորարարական մոդելները, դրանց կառուցվածքային գնահատման գործիքները: Երրորդ օրվա ընթացքում բուժքույրերը ներկայացրեցին և դասընթացավարների հետ համատեղ վերլուծեցին տրված տնային առաջադրանքները:

8. Դեկտեմբերի 08-ին, Ծրագրի ղեկավարը մասնակցեց Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՅՈՒՆԻՍԵՖ-ի նախաձեռնությամբ, ինչպես նաև ԵՄ ֆինանսավորմամբ կազմակերպված քննարկմանը՝ տարեց և հաշմանդամություն ունեցող

անձանց, ինչպես նաև երեխաներին տրամադրվող խնամքի ծառայությունների նվազագույն չափորոշիչների համապատասխան վերաբերյալ: Միջոցառմանը մասնակցում էին նաև ԱՍՀ նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը, Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցչի տեղակալ Միլվիա Մեսսորոնին, միջազգային կառույցների ներկայացուցիչներ, ինչպես նաև ոլորտային մասնագետներ: Քննարկման ընթացքում ներկայացվեցին խնամքի ոլորտում նախատեսվող նոր չափորոշիչները, որոնք միտված են խնամքի ծառայությունների որակի բարձրացմանը և շահառուների իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանը: Չափորոշիչները կիրառելի են լինելու բոլոր ծառայություն մատուցողների համար՝ անկախ կազմակերպության կազմակերպաիրավական ձևից և ֆինանսավորման աղբյուրից, ինչպես նաև կապակցվելու են պարտադիր հավատարմագրման գործընթացի հետ: Միաժամանակ անդրադարձ կատարվեց նախատեսվող բարեփոխումների փուլայնությանը, վերահսկողական մեխանիզմներին և ֆիսկալ ազդեցություններին: Նշվեց, որ չափորոշիչների ուժի մեջ մտնելուց հետո կազմակերպություններին կտրամադրվի անցումային ժամկետ՝ հավատարմագրվելու համար:

9. Դեկտեմբերի 10-ին, Հայկական Կարիտասի և ՀՀ ԱՆ Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում 2025 թ. դեկտեմբերի 10-13-ը, Վանաձորում անցկացվեց գործող բուժքույրերի համար մշակված նոր ուսուցողական մոդուլի հիման վրա կազմակերպված առաջին դասընթացը՝ շուրջ 50 բուժքույրերի մասնակցությամբ: Դասընթացի առաջին երկու օրերին անցկացվեց տեսական ուսուցում, որը վարեցին առողջապահության ազգային ինստիտուտի դասախոսները, իսկ երրորդ օրը նվիրված էր գործնական հատվածին, որը անցկացրեցին «Տնային խնամք» ծրագրի բուժքույրերը: Ծրագրում ընդգրկված էին գերիատրիա և գերոնտոլոգիա, արդյունավետ հաղորդակցման էթիկա, Բոբաթ խնամքի մոտեցում, կինեսթեթիկա, անկողնային հիվանդների խնամք և այլ կիրառական թեմաներ: Վերապատրաստման շրջանակներում քննարկվեցին գերիատրիա և գերոնտոլոգիա, արդյունավետ հաղորդակցման էթիկա, բոբաթ խնամքի գաղափար, կինեսթեթիկա, անկողնային հիվանդի խնամք և այլ կարևոր գործնական թեմաներ: Դասընթացի ավարտին Մասնակիցները ստացան 15 ՇՄԶ կրեդիտներ:

10. Դեկտեմբերի 12-ին Գյումրու «Տնային խնամք» ծրագրի 9 սոց. խնամողները մասնակցեցին Էմիլի Արեգակ կենտրոնում կազմակերպված «Պալիատիվ խնամք. Սուպերվիզիա» թեմայով դասընթացին: Հանդիպումն անցկացվեց սուպերվիզիայի ձևաչափով՝ հոգեբան Կարինե Միրզոյանի կողմից: Քննարկման ընթացքում մասնակիցները ծանոթացան պալիատիվ խնամքի հիմնարար մոտեցումներին՝ տարիքային առանձնահատկությունների համատեքստում, ինչպես նաև իրականացվեցին գործնական դեպքերի քննարկումներ՝ նպատակ ունենալով խորացնել մասնագիտական գիտելիքները և զարգացնել աշխատանքում կիրառվող հմտությունները: Սուպերվիզիան նպաստեց մասնակիցների փորձի փոխանակմանը, մասնագիտական աջակցությանը և որակյալ խնամքի շարունակական բարելավմանը՝ շահառուների արժանապատիվ կյանքի ապահովման նպատակով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Ա. Մանդասարյան

---------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Գործադիր տնօրեն՝ Գ. Տ[illegible]

---------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

Ձևաչափ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 100 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 77 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 10 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 8 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 10 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 90 |
| 1.4 | այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք | 1 |
| 1.4.1 | այդ թվում՝ կին | 1 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ), *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա -11<br>Բ -89 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 100 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 100 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 100 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 45 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 46 |
| 7. | այլ ծառայություն (նշել) լվացքի կազմակերպում | 33 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան

թ.

«22» դեկտեմբեր 2025

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գլխավոր քարտուղար՝ Ա. Մանգասարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Գործադիր տնօրեն՝ Գ. Տարայան

(ստորագրություն)

Հայկական Կարիտաս բարեգործական հասարակական կազմակերպություն Armenian Caritas Benevolent Non-Governmental Organization 1995